| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 26 | Սեպտեմբեր | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 26 | Սեպտեմբեր | 2019 թ. |

# Հաշիվ վավերագիր
## (արտադրանքների, ապրանքների առաքման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 4389530525 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

**Պայմանագիր**

| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Արտադրանք, ապրանք առաքող անձ**

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ; N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

**Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ**

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն; N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |

| [21] Ում միջոցով | | |
|---|---|---|
| | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր | Համար |
| | | Ամսաթիվ |

| | |
|---|---|
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզային հարկ | Այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68105819բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

26/09/2019 13:51:01

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

18 օգոստոսի 2019թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ.Բ.Սամվելյանս, քննարկելով վարույթումս քննվող 68105819 քրեական գործի նյութերը.

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019թ. հունիսի 26-ին, ժամը 00:20-ին <<Գյումրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին ահազանգ է ստացվել, որ գանգուղեղային փակ վնասվածք, կրծքավանդակի և որովայնի բութ վնասվածքներ ու քերծվածքներ ախտորոշմամբ նշված բժշկական կենտրոն է տեղափոխվել Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու 143 ա շենքի 9-րդ բնակարանի բնակիչ, 13.11.1965թ. ծնված Սամվել Փարնավազի Խաչատրյանը և աջ ուսահոդը կազմող ոսկրերի փակ կոտրվածք ախտորոշմամբ նույն շենքի 10-րդ բնակարանի բնակչուհի, 01.07.1962թ. ծնված Սոնա Օրուջի Օրուջյանը:

<<Գյումրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հերթապահ բժշկի կողմից տրված տեղեկանքի համաձայն Սամվել Փարնավազի Խաչատրյանի վիճակը գնահատվել է ծանր, գիտակցությունը մթագնած է, բացատրություն տալ չի կարող:

Դեպքի առթիվ 2019թ. հունիսի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 68105819 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Արա Հակոբի Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2019 թվականի հունիսի 25-ին՝ ժամը 23-ի սահմաններում, ալկոհոլի ազդեցության տակ գտնվելով Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու 143 ա շենքի բակում, կենցաղային հարցի շուրջ՝ իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Լաուրա Մխիթարյանի հետ հեռախոսով խոսելու ընթացքում վերջինի հասցեին հայհոյանքներ տալու կապակցությամբ դիտողություն ստանալով նույն շենքի բնակիչ՝ Սամվել Փարնավազի Խաչատրյանից, վիճաբանել է նրա հետ, որի ընթացքում դիտավորությամբ բռունցքով մեկ անգամ հարվածել է Ս.Խաչատրյանի դեմքին, կատարելով աջ կոնքի վրայից գցում սպորտային հնարք / բեղրո / գցել ասֆալտապատ գետնին, ձեռքերով 2-3 հարված հասցրել նրա գլխին, 2-3 անգամ հարվածել նրա կրծքավանդակի, որովայնի հատվածներին, ոտքով մեկ անգամ գլխին՝ առաջացնելով գանգուղեղային փակ վնասվածքի, ծանր աստիճանի գլխուղեղի սալջարդի, կրծքավանդակի և որովայնի բութ վնասվածքների ու քերծվածքների ձևերով մարմնական վնասվածքներ:

Նախաքննության ընթացքում Ա.Մարտիրոսյանի մայրը՝ Լ.Մարտիրոսյանը, վարույթն իրականացնող մարմնին է տրամադրել բժշկական փաստաթղթերի պատճեններ, որոնց համաձայն Արա Հակոբի Մարտիրոսյանի մոտ ախտորոշվել է անձի շեշտվածություն,

ժամանակավորապես պիտանի չէ զինվորական ծառայության համար և ստացել է 3 տարի ժամանակով տարկետում:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246 րդ, 248-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. 68105819 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Մեղադրյալ Արա Հակոբի Մարտիրոսյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այն, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:
- Եթե Արա Հակոբի Մարտիրոսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Արա Հակոբի Մարտիրոսյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այն, ապա՝ ինչպիսի:
- Եթե Արա Հակոբի Մարտիրոսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:
- Արա Հակոբի Մարտիրոսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Արա Հակոբի Մարտիրոսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այն, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետների միջնորդությամբ տրամադրել քրեական գործի նյութերը և վերջինների կողմից նշանակված օրը փորձաքննության ներկայացնել փորձաքննվող Արա Հակոբի Մարտիրոսյանին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Վ.Բ.Սամվելյան